**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ** ԳԲ-ՊՎ-16

Քաղ. Երևան «12» «02» 2015թ.

Հայաստանի Հանրապետության **գյուղատնտեսության նախարարությունը** ի դեմս **նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի** (այսուհետ՝ Շնորհատու), որը գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ի դեմս տնօրեն Վ. Մանուկյանի** (այսուհետ՝ Շնորհառու), որը գործում է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) «Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումներ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Շնորհառուին հատկացնել Որոշմամբ նախատեսված 58 930 600 (հիսունութ միլիոն ինը հարյուր երեսուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, իսկ Շնորհառուն պարտավորվում է ծրագիրն իրականացնել վերը նշված որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**2.1 Շնորհատուն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետները նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել ավարտ միջոցառումների արդյունքները:

**2.2. Շնորհառուն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Շնորհատուի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

**2.3. Շնորհատուն պարտավոր է՝**

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացված միջոցառման մասին N2 և N4 հավելվածներով սահմանված ձևի ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Շնորհատուն հաշվետվությունն ընդունելու դեպքում նույն ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Շնորհառուին:

**2.4. Շնորհառուն պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակում Շնորհատուի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին,

2.4.4.1. ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունները ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող մինչև ամսվա 10-ը փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվության հետ միաժամանակ, իսկ Ծրագրի ավարտից հետո ամփոփ հաշվետվություն՝ հիմք ընդունելով N 2 հավելվածը:

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհառուն պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

## 3. Մոնիթորինգը

3.1. Շնորհատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհառուին տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհառուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին որպես դրամաշնորհ վճարել 58 930 600 (հիսունութ միլիոն ինը հարյուր երեսուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածին համապատասխան: Ծրագրի գնից 4 400 000 (չորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամը Շնորհատուն փոխանցում է Շնորհառուի բանկային հաշվին որպես կանխավճար:

4.2. Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ համաձայն N4 հավելվածի Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվությունների ընդունելուց հետո Շնորհատուն հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարը, որպես կանխավճար վճարում է Շնորհառուին:

4.3. Շնորհառուին վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին N 2 և N4 հավելվածներով սահմանված ձևի հաշվետվությունները ընդունվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օվա ընթացքում՝ համաձայն N 3 հավելվածի:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

## 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը (կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը):

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակով, 8 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| ՇՆՈՐՀԱՏՈՒ | ՇՆՈՐՀԱՌՈՒ |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ |
| ք. Երևան, Կառավարական շենք 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>հ/հ 900011008308 | ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա<br>«Կոնվերսբանկ» ՓԲԸ<br>հ/հ 1930005627050100<br>ՀՎՀՀ 00091693 |
| Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ<br>Կ.Տ. | Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ<br>Կ.Տ. |

Հավելված
2015թ. 02 12-ին
կնքված N 16071-16 պայմանագրի

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| հ/հ | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջին ժամկետը | պահանջվող գումարը (հազ. դրամ) |
| 1. | Սերմերի որակի առողջում և պետական սորտափորձարկում | Ծրագրի նպատակը գյուղատնտեսության բնագավառում տեխնոլոգիական առաջընթացի և Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության միջոցառումների ապահովումն է: ՀՀ 2015թ. պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհի սահմաններում պայմանավորված է բույսերի նոր սորտերի ստեղծման և օգտագործման գործընթացի կանոնակարգման, սելեկցիոն նվաճումների իրավական պաշտպանության ապահովման, հանրապետության բնակլիմայական տարբեր գոտիներում մշակության երաշխավորվող բույսերի սորտային կազմի ընդլայնման և ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի վերահսկման կանխարգելման նպատակով պետության կողմից <<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ-ին իր կանոնադրական խնդիրների իրականացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ: | Ծրագրավորվում է իրականացնել սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի հրապարակումներ, ինչպես նաև բույսերի նոր սորտերի դաշտային փորձարկումներ: | Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ունենալ սելեկցիոն նվաճման հայտերի փորձաքննության արդյունքում մշակաբույսերի արտոնագրված և երաշխավորված նոր սորտեր /հիբրիդներ/, բույսերի նոր սորտերի վերաբերյալ հրապարակված պաշտոնական տեղեկատվություն: | 30.12.2015թ. | 58930,6 |
| | Ընդամենը | | | | | 58930,6 |

**Շ Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ւ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
հ/հ 900011008308

Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**Շ Ն Ո Ր Հ Ա Ռ Ո Ւ**

<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Մանիկյանց 39 ա
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
հ/հ 1930005627050100
հվհհ 00091693

Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 2
2015թ. 02 12 -ի
կնքված ...-16... պայմանագրի

# ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, սահմանված կառավարման տարածքային մարմնի անվանումը — ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Ծրագրի անվանումը — <<Սերմերի որակի ստուգման և սելեկցիոն նվաճումների պահպանության ծառայություններ>>

| Նկարագրությունը | Միջոցառման անվանումը | Չափի միավորը | Նախատեսվում է իրականացնել 2015 թվականի ընթացքում ըստ որում աճողական | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ քանակը | Կիսամյակ քանակը | Ինը ամիս քանակը | տարի քանակը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Գյուղատնտեսության մեջ օգտագործվող սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների ծառայություններ, սելեկցիոն նվաճումների հայտերի տրամաքննություններ, բույսերի նոր սորտերի փորձարկումներ | Սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, գրանցամատյանների վարում, սերտիֆիկատների հաշվառում, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմում | հատ | 5 | 10 | 16 | 20 |
| | Բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում | հազար տոննա | 2.0 | 5.8 | 9.3 | 14.5 |
| | Բույսերի նոր սորտերի տեղեկագրի և գրանցամատյանի հրապարակում | ծավալ | | | | 600 |
| | Բույսերի նոր սորտերի առողջ ցանքերի հիմնադրում և դաշտային փորձարկումներ | հատ | 30 | 80 | 145 | 155 |

**ՏՆՕՐԻՆՈՂ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008308

Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ

հ/հ 1930005627050100
հվհհ 00091693

Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Կ.Տ.

Հավելված
2015 թվականի 02.12 ի կնքված
N[illegible]-16 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Հիմնարկի անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագիր | Նախ |
|---|---|---|---|---|
| 04 | 02 | 01 | 03 | 104007 |

Ծրագրի անվանումը <<Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումներ>>

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական բաժանմունքի անվանումը ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

4. գանձապետական բյուջետային հաշվի համարը 900011008308

հազ. դրամ

| հ/հ | Ձեզ բերվող ծառայությունների անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը | Ընդամենը տարեկան | Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից անողական, ընդ որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | I կիսամյակ | | | ինը ամիս | | | տարի | | |
| | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ | 4637 | 58930.6 | 4400.0 | 8800.0 | 13180.0 | 17560.0 | 21945.0 | 27370.0 | 32800.0 | 38233.0 | 45130.0 | 52000.0 | 58930.6 |

**ՇՆՈՐՀԱՏՈՒ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008308

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**ՇՆՈՐՀԱՌՈՒ**

<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ

հ/հ 1930005627050100
հվհհ 00091693

Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 4
2015թվականի 02 .. ի կնքված
N [illegible] պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ և ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ
____ ________ 2015թ. ____ ________ 2015թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ «[illegible]» ՊՈԱԿ
2. Փոստային հասցեն՝
3. Հիմնարկի ստորադասման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
5. Հիմնարկը սպասարկող բանկի անվանումը
6. Հիմնարկի հաշվարկային հաշիվ՝ Կենտրոն Գանձ ՓԲԸ 19300-0562735010
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 1
(ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2)

8. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման — Բաժին N 04, Խումբ N 02, Դաս N 01

9. Ծրագրի անվանումը [illegible]
10. Ծրագրի կոդը — 03
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման — 104007

12. Չափի միավորը՝ հազար դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը | | Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխությունները տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա, սակայն չվճարված կրեդիտորական պարտքեր | | Դեբիտորական պարտքեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | NN | | ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | Որից 30 օր անց պարտքեր | |
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | ԺԳ | ԺԴ |
| 1100000 | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ | | | | | | | | | | | | |
| | այդ թվում | | | | | | | | | | | | |
| 1150000 | 5. Դրամաշնորհներ | | | | | | | | | | | | |
| | Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին | | | | | | | | | | | | |
| | այդ թվում | | | | | | | | | | | | |
| | Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | | | | | | | | | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000 + տող 1200000) | | | | | | | | | | | | |

«____»__________ 2015 թ.

Կ.Տ.

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ ________ (ստորագրություն) Վ. Մանուկյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ ________ (ստորագրություն) Ց. Հ[illegible]

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

________________ Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 12
## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ
(01. 01. 2014 թ. – 30.12. 2014 թ. ժամանակահատվածի համար)

1. Հիմնարկի անվանումը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ
2. Փոստային հասցեն՝
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
5. Հիմնարկը սպասարկող բանկի անվանումը՝
6. Հիմնարկի հաշվարկային հաշիվ՝ Կենտրոնական ԳԲ ՓԲԸ 19300-05627050100
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 1
(ՀՀ պետական բյուջե 1, համայնքի բյուջե 2)

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման — Բաժին N 04, Խումբ N 02, Դաս N 01
9. Ծրագրի անվանումը Սերմերի որակի ստուգման և գնահատման ծառայությունների մ/ջ.
10. Ծրագրի կոդը 03
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 104007
12. Չափի միավորը՝ հազար դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի | | Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա սակայն չվճարված պարտավորություններ (պարտքեր) | | Դեբիտորի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումները | NN | | ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կորոշ (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | Որից 30 օրից ավել պարտքեր | |
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | ԺԳ | ԺԴ |
| 1100000 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում | | 57841.8 | | | | 57841.8 | 57841.8 | 57841.8 | 57841.8 | | | |
| 1150000 | 5. Դրամաշնորհներ | | | | | | | | | | | | |
| 1167100 | Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 57841.8 | | | | 57841.8 | 57841.8 | 57841.8 | 57841.8 | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000) | • | 57841.8 | | | | 57841.8 | 57841.8 | 57841.8 | 57841.8 | | | |

________________2014թ.

ՏՆՕՐԵՆ (ստորագրություն) Վ. Մանուկյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ (ստորագրություն) Ց. Հերթյան

| Նկարագրություն | Միջոցառման անվանումը | Չափի միավորը | Պայմանագրով նախատեսված և փաստացի կատարված աշխատանքների ծավալը | | Շեղման պատճառները |
|---|---|---|---|---|---|
| | | | Տարի | | |
| | | | Պլանային | Փաստացի | |
| Գյուղատնտեսության մեջ օգտագործվող սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների ծառայություններ, սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, բույսերի նոր սորտերի փորձարկումներ | Բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում | հազար տոննա | 14.5 | 14.5 | |
| | Սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննություններ, գրանցամատյանների վարում, օրիգինատորի հաշվառում, բույսերի սորտերի նկարագրությունների և | հատ | 20 | 20 | |
| | Բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանի հրապարակում | ծավալ | 600 | 600 | |
| | Բույսերի նոր սորտերի առաջին ցանքերի իրականացում և դաշտային փորձարկումներ | հատ | 155 | 155 | |

___________2014թ.

Կ.Տ

ՏՆՕՐԵՆ (ստորագրություն) Վ.Մանուկյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ (ստորագրություն) Ց.Հեքիմյան